Մանկութիւնից քուրդը կրթւում է ձիան սանձ կառավարելու, զէնք գործածելու, մարմնամարզութեան եւ այլ ճարպկութիւնների մէջ: Նա քաջագործութիւն է համարում գողանալ, յափշտակել ամէն ինչ, որ պէտք էր իր ապրուստի համար: Նա մինչեւ անգամ գողանում էր իր հարսնացուին: Բախտաւոր է համարւում ամուսնութիւնը, երբ տղամարդ-հերոսը առեւանգել էր իր սիրուհին հօր ընտանիքից: Կինը այսպիսի դէպքերում մի առանձին հպարտութեամբ է նայում իր ընկերուհիների վրայ:

Քրդի ամենամեծ երդումը թալախի վրայ է լինում. նա առնում է մի քար եւ նետում է, ասելով՝ «թող իմ թալախին այս քարի պէս գցած լինի, եթէ այսպէս, կամ այնպէս անեմէ: Թալախը նրա ամուսնական կապն է, նա լուծոած է համարւում, երբ նրանով երդում ուտողը երդմնազանց է լինում: Այսպիսի երդումները պահանջւում են, երբ պէտք էր որեւիցէ գործի մէջ ամենահաստատ գրաւական մի մարդու հաւատարմութեան մասին: Եւ այդ լինում է այն ժամանակ, երբ գործը վերաբերում էր ընդհանրութեան ամենակարեւոր մէկ հարցին:

Որպէս բնութեան ազատ որդի, նոիրելով իրան անհոգ եւ պարզ կեանքի, քուրդը բաւականանում է իր անասուններով: Նա հովիւ է: Նա չունի տուն եւ հաստատ բնակութիւն. նրա օթեւանը իր չադրն է, որը կազմում է այնտեղ, ուր կարող է իր անասունների համար ճարակ գտնել: Ձմեռային ձիւները միայն քշում են քուրդին իր սիրելի սարերից, այն ժամանակ եւս մի հայի տուն միշտ պատրաստ է ընդունել ինքնակոչ հիւրին: Այնտեղ քուրդն իր անասունների հետ անցուցանում է ձմեռը, մինչեւ գարունը կրկին կոչում է նրան դէպի լեռների գիրկը:

Քրդի կերակուրն է՝ իր անասունների կաթը, մածունը, պանիրը, սերը, կարագը եւ իւղը. նա չէ դիպչում նրանց մսին: Քրդի հագուստն, ոտքից մինչեւ գլուխ, կազմոած է իր անասունների բուրդից եւ կաշուց, իսկ այդ բոլորը պատրաստում է նրա կինը: Տղամարդը տնտեսութեան մէջ աւելի չէ խառնւում. նա պատե-ռազմական մարդ է: Երկրագործութիւնը, արհեստը քրդի համար ստոր պարապմունքներ են, որոնց նա արհամարհում է, համարելով ռայայի գործ: Վաճառականութիւնը նրա մէջ դեռ պահպանել է իր հին նահապետական ձեւը: Նա տալիս է, օրինակ, քսան ոչխար եւ գնում է մի ձի. նա փոխում է իր իւղը, պանիրը, բուրդը երկրագործի ալիւրի հետ կամ արհեստաւորի շինած այս եւ այն գործիքի հետ: Եւ այս բոլորը կատարում է նա չափազանց միամտութեամբ. ամէն առեւտուրի մէջ խաբւում է նա. ամէն փոխարինութեան մէջ որսում է նրանից հայ կամ հրէայ մանրավաճառը իր շահերը: Որովհետեւ այսպիսի յարաբերութիւնների մէջ քուրդը գործ չէ դնում